

ԱՆՆԱԿԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՈՒՄ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԸ Ն. ՄԱՌԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՐ

Նիկողայոս Մառի «Ժողովածուք առակաց վարդանայ» հետազոտությունը եղել է հեղինակի մագիստրոսական առեմախոսությունը, որի վրա մա աշխատել է երկար տարիներ: Սկզբում առաջադիր խնդիր է եղել հետևյալը: Երբ է հայերեն «Աղվեսագիրքը» ստեղծվել և արդյո՞ք այն եղել է թարգմանություն արաբական համանուն գրքից, թե՞ ընդհակառակը՝ արաբական «Лисья книга»-ն թարգմանվել է հայերենից: Երբ գիտնականը ձեռնարկում է «Աղվեսագրքի» ուսումնասիրությունը, պարզվում է, որ այն չափազանց տարողունակ հետազոտական բնագավառ է, և գիտական ճշմարտությունը պարզելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ հնարավորինս հարուստ ձեռագրական նյութ: Այդ նպատակով անմիջապես դիմում է աշխարհի բոլոր այն գրադարաններին, որտեղ կային կամ կարող էին լինել հայ առակագիրների երկերը պարունակող ձեռագիր մատյաններ: 1899-ի ապրիլի 1-ին գրված և գրքին կցված համառոտ խոսքում մա խոստովանում է, որ բոլոր գրադարանային թիվանքներում աշխատող մարդիկ իր դիմումներին վերաբերվել են հավասար ուշադրությամբ, և երախտագիտության խոր զգացումը պարտավորեցնում է իրեն բոլորին հավասարապես ասել ջերմ ու սրտագին շնորհակալություն¹:

Նիկողայոս Մառի հետազոտությունը հիմնարար է և ավարտուն: Ավելին, մրա գիտականությունն այնքան շեշտված է, որ հասանելի է միայն մեղ գիտական շրջանակների համար: Այս փաստն ամենից ավելի դիպուկ բնորոշել է մրա արժանավոր աշակերտը՝ Հովսեփ Օրբելին, իր «Басни средневековой Армении» գրքում: Նա շեշտում է այդ աշխատանքի նախատեսված լինելը խիստ սահմանափակ գիտնական-մասնագետների համար, որոնք պետք է լինեին բանասեր-արևելագետներ²: Հ. Օրբելին խոր ափսոսանք է հայտնում այն իրողության համար, որ իրականում այդ ժողովածուները պարունակում են այնպիսի զանգներ, որոնք դարերով սիրված են եղել հայ ժողովրդի լայն զանգվածների կողմից և գիտական համակարգման ձևով ներկայացնելը հեռացրել է գրական այդ նյութը ընթերցողների լայն շրջանակից: Հովսեփ Օրբելին Ն. Մառի հրատարակած առակների և զրույցների մեջ տեսնում է պատմական մեծ արժեք. չնայած մրանց մեջ հաճախ պահպանված չեն պատմական անձերի անունները, սակայն մրանցում կան այնպիսի նյութեր, որոնք չենք գտնում ժամանակի տարեգրիների երկերում³:

Ն. Մառի երեք ժողովածուներին անդրադարձել է մա Մանուկ Աբեղյանը՝ իր «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում: Թեմատիկ նյութը զետեղել է

¹ Н. Марр, Сборники притч Вардана, часть I, Исследование, СПб, 1899, стр. IV.

² Տե՛ս И. А. Орбели, Избранные труды, т. 1, Ереван, 1968, стр. 222.

³ Նույն փնդում:

«Առակագրություն» ընդհանուր խորագրի տակ և անդրադարձել Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու ստեղծագործությանն ու անակների՝ փորձելով նաև տալ նրանց հնարավորինս ամբողջական կենսագրականները⁴։ Մ. Աբեղյանի համար լիովին ելակետային են այն դրույթները, որոնք առաջադրված են Ն. Մատի հրատարակած ժողովածուներում։

Առակը հնագույն գրական տեսակ է և, ինչպես վկայում է ժամանակը, ու ինչպես հաստատում են տարբեր ազգերի գրականությունների պատմությունները, այն այսօր էլ կենսունակ է որպես ժանր։ Պատահական չէ, որ վաստակաշատ գրականագետներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Զրբաշյանը և բան. գիտ. դոկտոր Պիոն Հակոբյանը, ծանրակշիռ ուսումնասիրություններ են նվիրել հայ առակագրությանը՝ նոր փաստերով լրացնելով Ն. Մատի հիմնավորած գիտական տեսակետը Վարդանյան առակագրության վերաբերյալ։ Էդ. Զրբաշյանի ուսումնասիրությունը կոչվում է «Հայկական մի առակի միջազգային զուգահեռներ»⁵։ Նա իր հոդվածով անդրադարձել է Ն. Մատի «Ժողովածուք առակաց Վարդանայ» ժողովածուի երկրորդ մասում եղած թիվ 356 առակին, որն ունի «Իշխան եւ այրի» խորագիրը։ Նրա կարծիքով ո՛չ Ն. Մատը և ո՛չ էլ Հ. Օրբելին իրենց ուսումնասիրություններում չեն նշել այդ առակի ծագումը։ Մինչդեռ առակը որպես ժողովրդական պատում մերկայացրել է Հ. Թումանյանը⁶։ Այն իր բովանդակային նույնությամբ առկա է գերմանացի հայտնի գրող Ա. Ծամիստի «Այրի կնոջ աղոթքը» բանաստեղծության մեջ։ Նույն առակը գտնվում է և Հովհաննես Ծործորեցու «Քարոզգրքի» հենց սկզբնամասում։

Նմանօրինակ փաստարկները միայն հաստատում են Նիկողայոս Մատի վերոհիշյալ ժողովածուի այն դրույթները, թե առակների հորիզոնները չափազանց լայն են։ Պիոն Հակոբյանն անդրադարձել է առակների տեսության խնդիրներին՝ ուրվագծելով այդ ժանրի տեսական մտքի ձևավորումը միջնադարյան Հայաստանում։ Նա գրում է. «Տակավին անցյալ դարի 90-ական թթ. հայագետն (խոսքը Ն. Մատի մասին է - Ա.Դ.) անհերքելի փաստերով ապացուցեց, որ միջնադարյան հայ գրականության ամենի ստեղծագործություններից ամենից ավելի առակներն էին, որ առաջին ժողովածուները կազմելու օրերից շատ չանցած՝ թարգմանվեցին ու որդեգրվեցին հարևան ազգերի կողմից և արժանացան միջազգային ճանաչման»⁷։

Պ. Հակոբյանի համար միջնադարյան առակագրության ժանրային բնութագրման ելակետեր են Ն. Ադոնցի «Дяонисий Фракийский и армянские толкователи» գրքի համապատասխան հատվածը⁸ և Ստեփանոս Սյունեցու մշակած առակների ու առասպելների տեսությունը, որը որդեգրեցին Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին և ուրիշներ։ Առաքել Սյունեցին «Յաղագս քերականութեան համառոտ լուծմունք» երկում ներկայացնում է այնպիսի առակներ (իհարկե՝ պատմելով խիստ համառոտ և ենթադրելով, թե դրանք գիտեն իր ժամանակի ուլալ մարդիկ - Ա.Դ.), որոնք կան Ն.

⁴ Մանուկ Աբեղյան, Հայոց ինն գրականության պատմություն, հատոր 2, Երևան, 1946, էջ 142-187։

⁵ Տե՛ս «Պարմա-բանասիրական հանդես», 1-2, Երևան, 1997, էջ 71-80։

⁶ Նույն վրկում, էջ 73։

⁷ Պ. Հակոբյան, Առակների փաստերը միջնադարյան Հայաստանում (Տե՛ս «Պարմա-բանասիրական հանդես», հ.1, Երևան, 1995, էջ 169)։

⁸ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 159.

Մառի ժողովածուներում⁹:

Առաքել Սյունեցի, առակի ժանրը բնորոշելուց հետո, օրինակով հաստատում է այդ գրական տեսակի կիրառական լայն շրջագիծը, որի մեջ մտնում է նաև փոխտախտությունը. «Բայց թե զի՞նչ է «առակ» եւ զի՞նչ «արիմակ»: Առակն, այսինքն՝ թե սուտն է, բայց առ եւ արկ՝ եւ լինի «արիմակ»: Դարձեալ՝ առակն սուտ է, եւ արիմակն՝ ճշմարիտ: Վասն որոյ իմաստաւէրքն ի սուտ իրաց եւ յառասպելաց սահմանէին զառակն, իսկ Տէրն մեր զճշմարտութիւնն դնէր արիմակ: Իսկ տեղիք սոցա այսպէս են. ոմանք յառաջ քան զբանն եւ է ի մէջ բանին, եւ է, որ ի վերջքն, այսինքն՝ արիմակն յառաջ քան զբանն, զի ճշմարիտ է բանն, իսկ առակն՝ ի վերջքն: Իսկ երկուսն երբեմն ի մէջ բանին մտնին: Եւ այսոքիկ են առասպելախաւսութիւնք քերականիս, վասն որոյ ասէ Պորփիր ի վեցերորդ գլուխն, որ վասն ձայնին ճառ է...»¹⁰:

Առակի գրական տեսակի տարածական եւ բազմաշերտ լինելն էլ Ն. Մառին թելադրել է հայկական առակագրության հիման վրա ներկայացնել Արևելքի եւ Արևմուտքի միջնադարյան գրական կապերը՝ բացելով նրանց հանգույցներից դժվարագույնները:

Առակի դաստիարակչական բնույթը գիտակցել են բոլոր դարերում, և պատահական չէ, որ 1878 թվականին, Բաքվում, Խորեն քահանա Միգաբեկյանցը հրատարակում է Մխիթար Գոշի, Ողոմպիանու եւ Եզովպոսի ընտիր առակները՝ դրանց կցելով համառոտ, սակայն բովանդակալից մի մախաբան՝ առակի կարևորության վերաբերյալ. «Այո՛, իմաստուն մարդիկը գտան այդ հմարը միմիայն առակներով: Այն, ինչ որ առակներով էր հայտնել և զգուշացնել՝ թագավորից սկսած մինչև հետին ուսմկին, անհմարին էր հայտնել և խրատել այլապես»¹¹:

Ն. Մառի Վարդանյան առակների ժողովածուի երրորդ գիրքը՝ տեսական ծավալուն մասը, անհմար է կարդալ առանց մասնագիտական կենտրոնացման ու մտային խոր հիացմունքի: Նախ պետք է խոստովանել, թե այն կատարյալ ընթերցելու համար պետք է կարողանալ օգտվել շուրջ տասնհինգ լեզուներից:

Օրինակ, եթե Ն. Մառը եվրոպական առակագրության մասին մեջբերումներ ունի եվրոպացի գիտնականներից, ապա ֆրանսիացունը, անգլիացունը, գերմանացունը, իտալացունը կատարում է նրանց մայրենի լեզուներով, առանց ուսերենի կամ հայերենի թարգմանության: Ի դեպ, նա հաճախ ուսերեն իր խոսքում այդ լեզուներով էլ բերում է նրանց գրքերի կամ հոդվածների խորագրերը և դրանց հեղինակների անունները: Մառը գրում է խիստ գիտական, սակայն աշխույժ ու փոքր-ինչ «չարածի» ոճով: Նա երբեմն հեզմուն է որոշ եվրոպացի բանասերների փաստագուրկ եզրակացությունները և մի առանձին հաճույքով՝ կետ առ կետ (այդպես մեզանում Եզնիկ Կողբացին էր գրում իր «Եղծ աղանդոցում») հերքում է նրանց՝ ապացուցելով նրանց տեսակետների ողջ խախտությունը: Բերենք բնորոշ մի օրինակ: Ն. Մառն ընդդիմախոսում է անգլիացի բանասեր Jacobs-ին, ըստ որի Երեմիա վարդապետը 12-րդ դարի վերջին «Աղվեսագիրքը» արաբերենից թարգմանել

⁹ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականության համառար լուծմունք, Լոս Անճլիոս, 1982, էջ 80-81:

¹⁰ Նույն տեղում, էջ 81:

¹¹ Գոշ Մխիթարի, Ողոմպիանու եւ Եզովպոսի ընտիր առակները, թարգմանություն Խորեն քահանայի Միրզաբեկյանց, Բաքու, 1878, էջ ա:

է հայերէնի. «Однако категорическое заявление Jacobs'a о том, что Вардапет Иеремия переводил в конце XII века Лисью книгу с арабского на армянский язык, оказалась плодом фантазии»¹²: Թէ ինչու է սխալվել անգլիացի հետազոտողը, Ն. Մառը բացատրում է շատ հստակ: Պարզվում է, որ նա իր փաստերը քաղել է ֆրանսիացի բանասեր Դյու Մերիի մի գրքից, որը կոչվում է «La Poésies inédites du moyen âge, précédées d'une histoire de la Fable Esopique (Paris, 1854): Դյու Մերիը գրում է. «Առակը թվում է, Հայաստանում ունեցել է յուրովի ժողովրդայնություն, գրականության պատմությունը պահպանել է երեք առակագրի անուններ՝ Մխիթար՝ կոչված Գոշ, Վարդան և վարդապետ Երեմիա՝ մի անանուն ժողովածուի հեղինակ... ինչպես «Աղվեսագիրքը» («Livres du renard»)»¹³: Հետո նա ավելացնում է, թե այդ առակներից ամենահինը չի անցնում 12-րդ դարից այն կողմ, և հրաձգ կրկնում են չափազանց ստրկորեն Եզովպոսի և Հիմոդաստանի ամենածողովրդական առակները: Ն. Մառը բացատրում է, թե Դյու Մերիին էլ իր այդ կարծիքը կազմել է Neuman-ի գրածով, իսկ վերջինս էլ օգտվել է Ջոհրաբի և Սեն-Մարտենի կազմած «Choix de Fables de Vartan» գրքից: Առակագիր Երեմիան Դյու Մերիի գրածում թյուրիմացության արդյունք է¹⁴: Ն. Մառի համոզմամբ՝ արաբական «Աղվեսագիրքը» չի կարելի համարել դասական արաբական գրականության ստեղծագործություն, այն արաբական-քրիստոնեական գրական հուշարձան է¹⁵: Նրա կարծիքով՝ Լոխմանին վերագրվող առակների գիրքն էլ քրիստոնեական-արաբական գրական ծագում ունի¹⁶:

Չպետք է մոռանալ մի հանգամանք՝ «Ղուրանի» սուրահներից մեկը կապվում է Լոխմանի անվան հետ և իր բովանդակությամբ շատ նման է խիկարի խրատներին, Սողոմոնի Առակներին ու Ժողովողին¹⁷:

Նկատենք, որ քրիստոնյա արաբական գրականության ամենասկանալոր դեմքը՝ Աբուֆարաջը, որը գիտեր նաև հայերեն, ունի խրատական մի ժողովածու, որի մեջ հավաքել է Արևելքի և Արևմուտքի՝ անտիկ աշխարհի խրատական-առակախոսական պատմությունները¹⁸:

¹² Н. Марр, Сборники притч Вардана, СПб, 1899, стр. 2.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 3:

¹⁵ Նույն տեղում, էջ 47:

¹⁶ Նույն տեղում, էջ 49:

¹⁷ «Ղուրանի»՝ Լոխմանի վերագրվող սուրահում կա մի պարկեր, որը հիշեցնում է Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգության» պոեմի համապարասխան հատվածը:

Գրիգոր Նարեկացի

Ջի կթվ. գլիմ մի ծովուց ի յորակութիս դեղոյ յնոյնեցից,

...Եւ գպորակս յոգուց անտառաց շամբից նոկանց

Ի հալոսածս գոյութեան գրեաց կազմեցից...

(ԲԱՆ Թ, Ա)

Լոխման

26. Եւ կթվ. երկրիս վրայ եղած ծառերը գրիչնր լինին ևս ծովը նրանից յնոյն եօթնապարիկ բանաքի ծով դառնար, Աստուծո խօսքերը չլին սպառի. իրա Աստուծո գորաոր իմաստուն է (Տես՝ «Ղուրան», թարգմանեց արաբերենից հայերենի՝ Ար. Ամիրխանյան, Վառնա, 1909, էջ 391:

¹⁸ Абуль-Фарадж, Книга занимательных истории, Москва, 1957, стр. 4.

Տեսական հետազոտության առաջաբանում Ն. Մառը պատմում է, թե ինչպես է փոխվել իր ատենախոսության համեստ պլանը՝ վերածվելով ընդարձակ հիմնահարցերի խմբի: Նա պարզորոշ տեսել է Վարդան Այգեկցու առակագրական ժողովածուի մասնողությանը ստեղծված գրական կտորները և կարևորել բուն հեղինակի առակների վրայից հետամուտ շերտերի հետազոտումը, գտնել Վարդանի ձեռքով գրածները, միաժամանակ պարզել նաև այդ շերտերի հեղինակային պատկանելությունն ու ժամանակային ծագումը: Նա խոստովանում է նաև, որ իր հետազոտության մեջ ստիպված է եղել հընթացս անդրադառնալ ընդհանրապես հայ հիմ գրականության և պատմության զանազան հարցերին¹⁹:

Տեսական ուսումնասիրության երրորդ գլուխը կոչվում է «Просторные и краткие Бардашовские сборники»²⁰: Այստեղ բացատրություններով ներկայացվում է Վարդանյան առակների կամ «Աղվեսագրքի» առաջին տպագիր օրինակները: Առաջինը տպագրվել է Ամստերդամում, 1668-ին, և կոչվել «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք»: Տիտղոսաթերթի հակառակ կողմում չափածո ներքող կա՝ նվիրված Մովսես Խորենացուն: Սա հասկանալի է, որովհետև տպագիր երկի առաջին գործը Մովսես Խորենացուն վերագրված Աշխարհացույցն է եղել:

Երկրորդ հրատարակությունը Մարսելիցն է՝ 1676-ին: Այն վերստին Մովսես Խորենացու Աշխարհացույցի հետ է և այդ գրքի մասին ֆրանսերենով գրված է. «L'abrégé géographique de Moïse de Khoren avec un recueil de fables, connu chez les arméniens sous le titre de livre de renard. En arménien. Marseille, 1676 (1678)»²¹:

Երրորդ հրատարակությունը վերստին Մարսելում է՝ 1683-ին, վերստին Աշխարհացույցի հետ միասին:

Չորրորդ հրատարակությունը կատարվել է Լիվոռնոյում, 1698-ին: Այդ գրքի մանրամասն նկարագրությունը կա «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ. «Մովսես Խորենացի: Աշխարհացույց: - Աղուեսագիրք: Առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության, տպագրությունը երեմիա վարդապետ Մեղրեցու, 1698»²²: Նկարագրության վերջում կարդում ենք. «Գ. Լեոնյանի («Հայ գիրքը և տպագր. արվեստը») կարծիքով գիրքը տպագրվել է Լիվոռնոյում Ս. Էշմիածնի և Ս. Սարգսի տպարանում»²³:

Ն. Մառի հետազոտության երկրորդ և երրորդ մասերը լույս են տեսել առաջինից ավելի վաղ՝ 1894-ին, և հազեցած են գիտական աղյուսակներով ու բազմաթիվ հավելվածներով: Երրորդ մասի առաջին հավելվածն էշմիածնի Մատենադարանի հետևյալ տասը ձեռագրերի մանրամասն նկարագրությունն է, որոնց մեջ կան նաև Վարդանյան ձեռագրերը (ՏԵՄ № № 1, 57, 453, 1631, 1636, 1637, 1639, 1711, 1722, 1755):

Թիվ 1711 ձեռագրի նկարագրության մեջ Ն. Մառը նույնությամբ, գրաբարով մեջբերում է «Վարք Վարդանայ վարդապետի» գործը, որի սկզբի մասը ձեռագրում պակասավոր է²⁴:

¹⁹ Н. Марр, Сборники притч Бардана, стр. 8.

²⁰ Նույն տեղում, էջ 97:

²¹ Նույն տեղում, էջ 99:

²² Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնագիտական ընկերություն, Երևան, 1988, էջ 126:

²³ Նույն տեղում, էջ 129:

²⁴ Նույն տեղում, էջ 48-49:

վեցերորդ հավելվածում ուսերենմով և գրաքար զետեղում է «ԲԱՆՔ, Վանն խաբող աղուէսուն եւ չարութեան մորայ» ստակալոր գրույցը, որի բնագիրը համեմատական ձևով կազմել է Փարիզի Ազգային գրադարանի Հին ֆոնդի թ.135 գրչագրի և «Բազմավէպի» 1881 թվականի հրատարակության հիման վրա:

Ն. Մառը գրում է, որ մրանք չնչին տարընթերցվածներ ունեն: Մենք պարզեցինք, որ «Բազմավէպի» օրինակում բացակայում է Փարիզի ձեռագրում եղած բարոյախոսական ավարտը. «Յուցանէ առակս, թէ կան շատ նենգաւոր մարդիք, ևս առաւել սատանայ, որ բազում հմարիք ջանայ և զանազայն խաբէութեամբ որսայն զմարդիք և ձգեն ի յորոգայթ մեղացն և ինքեանք ծածաղին ի կորուստ մեղաւորացն և յետոյ մատնին ի հոյր զեհեհին ի յանգերծանելի տանջանս ինքեանք և արբանեակքն իրեանց: Եւ զմեզ ազատեայ Քրիստոս Աստուած մեր ի յաներևոյթ աղուէսուն, այսինքն՝ ի սատանայէ և ի պատրանաց մորայ. ամէն»²⁵:

«Բազմավէպի» օրինակի հրատարակողն իրավացիորեն նկատում է եվրոպական գրականության մեջ մեծ նշանակություն ունեցող նկատմամբ եղած բացառիկ լուրջ վերաբերմունքը. «...Եթե հայկական միջավայրում ոմանք մեծ գրույցը սուկ զվարճություն են համարում, ոմանք էլ՝ չնչին բան, ապա եվրոպական գիտնականների համար ոչ սակավ հարգի են մեծ գրույցները որպես միջնադարյան ավանդությունք և բանահյուսությունք»²⁶: Եվրոպական բանասիրությունն այդ մոտեցումները պահպանել է առ այսօր: 1970 թվականին Փարիզում հրատարակվել է ֆրանսիական գրականության հին հուշարձաններից մեկը՝ «Աղվեսի վեպը» («Le roman de Renart»):

Բնագիրը, ինչպես երևում է ֆրանսերեն խորագրից, միջին ֆրանսերենով է և հետո է այսօրվա գրական ֆրանսերենից: Հրատարակությունը գիտական է, ունի նախաբան-հետազոտություն, բառարան, բառերի բանալի, «Աղվեսի վեպի» հրատարակությունների ցանկ: Ընդարձակ առաջաբանի հեղինակն է Ժան Դյուֆուռեն: Նա «Աղվեսի վեպի» մասին բերում է ամվանի գրականագետներ Հակոբ Գրիմի և Լեոպոլդ Սուդրի կարծիքները, ըստ որոնց՝ այդ վեպը ժողովրդական ու հին ծագում ունի և առաջին հերթին կապվում է գերմանական ակունքների հետ²⁷: Միաժամանակ Լ. Սուդրը համոզված է, որ բանավոր ստեղծագործությունը ստեղծվել և եկել է բոլոր հորիզոններից՝ Հնդկաստանից, անտիկ դասականներից, միջնադարյան բանահյուսությունից, այդ պատմություններն ու գրույցները դուրս են եկել ժողովրդական միջավայրից և ձևափոխումների ենթարկվել բանավոր խոսքում²⁸:

Մատի ներկայացրած պատումի ժողովրդական համառոտ տարբերակը կա Սարգիս Հայկունու «Ժողովրդական առակներ» գրքում: Հայկունու գրքի Բ մասը կոչվում է «Աղվեսավէպ», և մեզ հետաքրքրող առակը վերնագրված է «Գէլ ու աղւես» և ստեղծված է Ալաշկերտի բարբառով²⁹: Բնականաբար Ն. Մառը ծանոթ չէր այս առակին:

²⁵ Ն. Մառը եւս իր գրքի փողարակում կշում է այս հարվածի բացակայությունը «Բազմավէպի» օրինակում (փնն նույն փնդում, էջ 192):

²⁶ «Բազմավէպ», Վեննիքի, 1881, պրակ Գ, էջ 193:

²⁷ «Le roman de renart», Paris, 1970, p.15.

²⁸ Նույն փնդում, էջ 16:

²⁹ Ս. Վայկունի, Ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907, էջ 32.:

ի վերջո, հետևելով Ն. Մառին, կարևորագույն խնդրին անդրադառնանք վերջում: Ն. Մառը խիստ գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համաճում ժողովածուից և այդ եզրափակումը հաստատող բազում փաստեր է բերում: Նա նշում է, որ հայկական «Աղվեսագրքում» դասական գրաբարի կողքին կան ռամկական լեզվով գրված հատվածներ, որոնք արաբերենի միակերպության համեմատ շատ բազմաթիվ լեզու են ներկայացնում և չեն կարող թարգմանության արդյունք լինել: Բացի այդ, նա բազմաթիվ էջերով և հարուստ լեզվական օրինակներով նկատում է հայերեն բառերի հետքերն արաբական թարգմանության մեջ: Այսպես, օրինակ, թարգմանիչը երբեմն հայերեն բառը ճիշտ չհասկանալով՝ այդ բառը բոլորովին այլ բառով է փոխարինում: Օրինակ, Աղվեսի մասին պատմող առակում գլղլոն բառը արաբերեն դարձել է գալ գալլուն և նույն առակի արաբական թարգմանության մեջ անհարկի հայտնվել է գալլը, որը գոյություն չունի նույն առակի հայերեն բնագրում³⁰:

Նիկողայոս Մառը 1894 թվականի հրատարակություններում դնում է գրաբարով գրված իր երկու հիշատակարանները, որով արտահայտում է նախ իր մեծագույն սերը հայ հնագույն լեզվի և մշակույթի նկատմամբ և երկրորդ՝ միջնադարի ոգով նրանցում հաղորդում է կարևոր տեղեկություններ իր աշխատանքի գրության մասին: Առաջին հիշատակարանը գրված է 1895-ի մայիսի 26-ին, Ս. Պետերբուրգում. «Գտցես անդամաւր և ազգի ազգի տեսութիւնս ի նուաստէս արարեալս և ծանօթութիւնս զանճնէ Վարդանայ Այգեկցոյ և զորոց նմին ընծային և զունակ զունակ ժողովածոյք առակաց, այլ լո՛ւր զառ տոյն երկրորդ մասն ցուցակ սխալանացն, զորս աստէն ի կրկին ընթեռնով նկատեսցուք և սոքին երանի թէ բնաւ ոչ ելանիցեն ի դէմսս, բայց ավա՛ղ տեսանեմ ահա ուրեք զելուզակսս զոգցես զնենգատոր կապս աչացն, թէպէտ և յոյժ փոքունս թուով: Իսկ կար իմ այսչափ էր»³¹:

Երկրորդ բաժնի հիշատակարանը հետևյալն է. «Փառք Աստուծոյ և Երրորդութեան: Յառաջին ամի ամենայն ռուսաց կայսեր Նիկողայոսի Երկրորդի, ի հայրապետութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մկրտչի Առաջնոյ, որ Հայրիկ բարոյք ասի, յաւուրսն յորս ի մայրաքաղաքիս հիւրընկալիւր հովիւ սրբազնագոյն հայկազեան ազգին, ի թուականութեան հայոց ՌՅԽԴ յամսեան մարերի յանգ հանաւ տպեցումն տառիցս, որ է մասն երկրորդ, առաւ ծախիւք Արեւելեան լեզուաց բաժնի Ս. Պետերբուրգի համալսարանի Կայսերականին և ջանիւք սպասաւորիս հայազիտութեան Ն. Մառի, որ և աղաչեմք զհանդիպողոյ տառիցս, չարեաւ մի՛ յիշէր զիս և ակամայ սխալանացս անմեղադիր լերուք»³²:

Միջնադարյան ոգով գրված այս հիշատակարանը ջերմությամբ է լցնում հայազիտությանը նվիրված ամեն անհատի՝ այնպիսի գիտնականի համդեպ, ինչպիսին է Նիկողայոս Մառը, որի այս մնացում և անգերազանցելի աշխատության մասին առավել ճշգրիտ ու տեղին է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հետևյալ նկատումը: Նա Ն. Մառին անվանում է հաճախեղ գիտնական, որը Անիի պեղումներով հարստացրեց ոչ միայն հայազիտությունը, կովկասագիտությունը, այլև Առաջավոր Ասիայի միջնադարյան պատմությունը³³:

³⁰ Н. Марр, Собрания притч Вардана, стр. 51.

³¹ Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Պետերբուրգ, 1894, էջ IV:

³² Նույն տեղում, էջ 344:

³³ И. А. Орбели, Избранные труды, т. 1, стр. 223.